ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.08.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/54

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսիյանի

Մասնակցությամբ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի գլխավոր տնօրենի ժ/պ՝

Է. Սաղաթելյանի

Մասնակցությամբ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝

Ա. Նիգարյանի (լիազորագիր տրված՝ 25.07.2019թ.)

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական հաամալսարան» հիմնադրամի լիազորված ներկայացուցիչներ՝

Պ. Գաբրիելյանի (լիազորագիր տրված՝ 25.07.2019թ.)

Տ. Միրզոյանի (լիազորագիր տրված՝ 25.07.2019թ.)

Քննելով «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար էլեկտրոտեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարված ԳՀԱՊՁԲ-2019/12-2-ԵՊԲՀ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի

կողմից 22.07.2019թ. ներկայացված և 23.07.2019թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/54 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 22.07.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

Ընկերությունը սույն թվականի հունիսի 25-ին ARMEPS համակարգի միջոցով info@armeps.am էլեկտրոնային փոստից ստացել է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից «ԳՀԱՊՁԲ-2019/12-2-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային ձևով անցկացվող գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) հրավերն (Ավտոմատ ծանուցում ARMEPS համակարգից - [ՄՀ.4999627] ՄՀ-ի հրապարակում), որի 1-ին և 2-րդ չափաբաժիններով նախատեսվում էր «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար ձեռք բերել համապատասխանաբար՝ պրոյեկտոր և պրոյեկցիոն էկրան:

Ընկերությունը հանդիսանալով տարածաշրջանում (Հայաստան և Վրաստան) AV-ոլորտում միակ մասնագիտացված կազմակերպությունն ուշադրությամբ հետևել է ընթացակարգին:

Այդ իսկ պատճառով, ղեկավարվելով 16.12.2016թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով ս.թ. հուլիսի 10-ին «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն դիմել է «ԳՀԱՊՁԲ-2019/12-2-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին procurement2.ysmu@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեով, խնդրելով «հասանելի լինելուն պես», տրամադրել ընթացակարգի 1-ից մինչև 12-րդ չափաբաժինները ներառյալ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը (անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը) պարունակող փաստաթղթերի՝ Հրավերի N3 և N3.1 հավելվածների պատճենները:

Ս.թ. հուլիսի 12-ին «ԳՀԱՊՁԲ-2019/12-2-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի քարտուղար Տատյանա Միրզոյանից՝ procurement2.ysmu@gmail.com

էլեկտրոնային փոստի հասցեից Ընկերությունը ստացավ առաջին տեղ զբաղեցրած բոլոր մասնակիցների կողմից ներկայացված Հավելվածներ 3.1:

Ընդ որում, նշված նամակում Տ.Միրզոյանը փաստում էր հետևյալը «... Հայտնում եմ նաև, որ ներկայացված տեխնիկական բնութագրերը գնահատող հանձնաժողովի կողմից դեռ գնահատված չեն...» («ԳՀԱՊՁԲ-2019/12-2-ԵՊԲՀ» ընթացակարգի հանձնաժողովից ստացված առ 12.07.2019թ. էլեկտրոնային նամակի պատճենը՝ ընդամենը 1(մեկ) թերթ կցված է սույն բողոքին):

Ուսումնասիրելով հանձնաժողովի կողմից տրամադրված՝ ընթացակարգի 1-ից մինչև 12-րդ չափաբաժիններով բոլոր 5 (հինգ) մասնակիցների կողմից ներկայացված Հրավերի N 3.1 հավելվածները, ընկերությունը հայտնաբերեց, որ մասնակիցներ՝ Ա/Ձ Արտյոմ Սահակյանի կողմից՝ 1-ին չափաբաժնով (պրոյեկտոր) և «Էլեկտրոգրուպ» ՍՊԸ-ի կողմից՝ 2-րդ չափաբաժնով (պրոյեկցիոն էկրան), ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Հրավերի պահանջներին:

I. Չափաբաժին №1

Գնահատող հանձնաժողովի քարտուղար Տ.Միրզոյանից վերոհիշյալ նամակը ստանալու նույն օրը՝ ս.թ. հուլիսի 12-ին «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն ուսումնասիրելով Ա/Ձ Արտյոմ Սահակյանի կողմից ներկայացված Հրավերի N 3.1 հավելվածը procurement2.ysmu@gmail.com և info@ysmu.am էլեկտրոնային փոստի հասցեներով, որպես հրավերով պահանջվող պրոյեկտորի արտադրողի՝ «Panasonic Corp.» (Display Products) ընկերության միակ լիազորված դիստրիբյուտոր և սերվիս-կենտրոն Հայաստանում, պաշտոնապես տեղեկացրել է «ԳՀԱՊՁԲ-2019/12-2-ԵՊԲՀ» ընթացակարգի գնահատող հանձնաժողովին, որ 1-ին չափաբաժնով առաջին տեղը զբաղեցրած մասնակից Ա/Ձ Արտյոմ Սահակյանի կողմից տրամադրված փաստաթղթերը չեն համապատասխանում Հրավերի պահանջներին, քանզի՝

ա) Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթում լիովին բացակայում է մատակարարվող Panasonic PT-MZ770U մակնիշի պրոյեկտորի ET-ELT22 ոսպնյակի արտադրողի անվանումը և ծագման երկիրը.

բ) Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթում լիովին բացակայում է մատակարարվող Panasonic PT-MZ770U մակնիշի պրոյեկտորի համար նախատեսված հատուկ պատի կախոցի արտադրողի անվանումը և ծագման երկիրը.

գ) Մասնակցի կողմից ներկայացված պրոյեկտորի համար նախատեսված հատուկ պատի կախոցի անվանումը սխալ է և չի համապատասխանում իրականությանը: QualGear Pr-AV նշանակում է ոչ թե կախոցի կոնկրետ մակնիշը, այլ նրա սերիան և արտադրողի պաշտոնական կայքում (տես՝ https://www.qualgear.com/pro-av-projector-mounts) առկա են նշված QualGear Pr-AV սերիայի 7 (յոթ) տեսակի կախոցներ:

դ) «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն դեռևս 2015թ. նույնանման առիթով «ԵՊԲՀ» հիմնադրամին է ներկայացրել Panasonic ընկերության պաշտոնական գրությունն (Panasonic Corp. ընկերության առ 01.04.2015թ. պաշտոնական գրության պատճենը՝ ընդամենը 2 (երկու) թերթ կցված է սույն բողոքին), որտեղ սևով սպիտակի վրա գրված է, որ «U» վերջածանցի առկայությամբ Panasonic պրոյեկտորներն նախատեսված են բացարձակապես ԱՄՆ-ում վաճառելու համար, «U» վերջածանցով Panasonic պրոյեկտորների ներմուծումը այլ երկրներ անթույլատրելի է և նման դեպքում արտադրողի կողմից տրվող երաշխիքն այդ պրոյեկտորների վրա՝ ընդհանրապես չի տարածվում հավելելով, որ նշված գրությունը կցված է սույն նամակին և եթե կարիք լինի պատրաստ ենք այն թարմացնել:

Ա/Ձ Արտյոմ Սահակյանի կողմից առաջարկվող ապրանքը՝ Panasonic PT-MZ770U մակնիշի պրոյեկտորը հենց այդ խմբին է պատկանում և հետևաբար հարց է առաջանում, թե արդյոք մասնակիցն իրականում կարո՞ղ է և ինչպե՞ս է նա պատրաստվում ապահովել հրավերով պահանջվող երաշխիքային սպասարկումը:

Ընկերությունը գտնում է, որ այս պարագայում՝ Panasonic PT-MZ770U մակնիշի պրոյեկտորի համար, պիտի կիրառվի ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 67-րդ կետի վերջին մասը, այն է «...Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է...»

Ելնելով վերը շարադրվածից ընկերությունը տեղեկացրել է «ԳՀԱՊՁԲ-2019/12-2-ԵՊԲՀ» ընթացակարգի գնահատող հանձնաժողովին, որ Ա/Ձ Արտյոմ Սահակյանի կողմից 1-ին չափաբաժնով առաջարկվող ապրանքը չի համապատասխանում հրավերի պահանջներին և վերջինիս հայտը՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 47-րդ կետի հիման վրա ենթակա է շտկման երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Նամակում նշվել էր նաև, որ 2-րդ և այլ չափաբաժինների վերաբերյալ ընկերության վերլուծությունները կներկայացվեն հաջորդ աշխատանքային օրը:

II. Չափաբաժին №2

Հաջորդ աշխատանքային օրը, այսինքն ս.թ. հուլիսի 15-ին, ժամը 13:26-ին Ընկերությունն, ինչպես և խոստացված էր, 2-րդ և մնացած չափաբաժինների վերաբերյալ վերլուծություններ պարունակող նամակով դիմել է «ԳՀԱՊՁԲ-2019/12-2-ԵՊԲՀ» ընթացակարգի հանձնաժողովին:

Ընդ որում, Պատվիրատուի պնդումից հետո, որ նա չի կարողանում ստանա ինչպես և առաջին նամակը կրկին procurement2.ysmu@gmail.com և info@ysmu.am հասցեներին ուղարկված հաղորդագրությունը, այն՝ Տ.Միզոյանի հետ համաձայնացնելուց հետո, ուղարկվել է նրա անձնական՝ mirztanya@yandex.ru էլեկտրոնային փոստի հասցեին և նամակի ստացումը վերջինիս կողմից հաստատվել է ս.թ. հուլիսի 15-ին ժամը 14:28:

Որպես տարածաշրջանում (Հայաստան և Վրաստան) AV-ոլորտում միակ մասնագիտացված կազմակերպություն, ընկերությունը նշված նամակում պաշտոնապես տեղեկացրել է «ԳՀԱՊՁԲ-2019/12-2-ԵՊԲՀ» ընթացակարգի գնահատող հանձնաժողովին, որ 2-րդ չափաբաժնով առաջին տեղը զբաղեցրած մասնակից «Էլեկտրոգրուպ» ՍՊԸ կողմից տրամադրված փաստաթղթերը չեն համապատասխանում Հրավերի պահանջներին, քանզի՝

ա) Մասնակցի կողմից ներկայացված ապրանքի և արտադրողի անվանումները սխալ են և չեն համապատասխանում իրականությանը.

բ) Մասնակցի կողմից առաջարկված ապրանքը իրենից ներկայացնում է պատին ամրացվող գլանակային, այլ ոչ թե՝ համալսարանին իրականում անհրաժեշտ շրջանակային պրոյեկցիոն էկրան, այն էլ ոչ թե ելեկտրական, այլ ձեռքով կառավարվող: Առաջարկած ապրանքն իր տեխնիկական բնութագրերով չի համապատասխանում Հրավերի պահանջներին (տես՝ ստորև ներկայացված աղյուսակը)՝

Հրավերի պահանջները	Մասնակցի կողմից ներկայացված տվյալները	Արտադրողի՝ Draper ընկերության պաշտոնական WEB կայքում հրապարակված իրական տվյալները

Էկրանի չափսերը (լայնություն x բարձրություն)՝ 366 x 235 սմ	Էկրանի չափսերը (լայնություն x բարձրություն)՝ 366 x 235 սմ	Էկրանի իրանի չափսերը՝ 375 սմ երկարություն (Case length: 375 cm) Էկրանի պաստառի չափսերը՝ 366 x 235 սմ (Overall size: 235 x 366 cm)
Պատկերի չափսերը (լայնություն x բարձրություն)՝ 350 x 219 սմ	Պատկերի չափսերը (լայնություն x բարձրություն)՝ 350 x 219 սմ	Պատկերի չափսերը (լայնություն x բարձրություն)՝ 356 x 222 սմ (Image/Viewable area: 222 x 356 cm)

Ի ապացույց վերը նշվածի գնահատող հանձնաժողովի ուշադրությանը՝ նամակին կից, ներկայացվել է արտադրողի՝ամերիկյան Draper Inc. ընկերության պաշտոնական WEB կայքից համապատասխան արտատպումը /Screenshot («Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ կողմից ուղարկված առ 15.07.2019թ. ամերիկյան Draper, Inc. ընկերության պաշտոնական WEB կայքից համապատասխան արտատպման պատճենը՝ ընդամենը 1 (մեկ) թերթ կցված է սույն բողոքին):

Ելնելով վերը շարադրվածից ընկերությունը տեղեկացրել է գնահատող հանձնաժողովին, որ «Էլեկտրոգրուպ» ՍՊԸ կողմից 2-րդ չափաբաժնով առաջարկվող ապրանքը չի համապատասխանում «ԳՀԱՊՁԲ-2019/12-2-ԵՊԲՀ» ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտն՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 47-րդ կետի հիման վրա ենթակա է շտկման երեք աշխատանքային օրվա ընթացքում և շեշտելով, որ ընթացակարգի մյուս չափաբաժիններով առարկություններ չունենք:

Այնուհետև, համաձայն 16.12.2016 թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի ընկերությունը գնահատող հանձնաժողովին խնդրել է՝ «հասանելի լինելուն պես», տրամադրել ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժիններով առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված, Հրավերի N 3.1, շտկած հավելվածների պատճենները:

Սակայն ս.թ. հուլիսի 16-ին գնահատող հանձնաժողովը հրապարակել է «ԳՀԱՊՁԲ-2019/12-2-ԵՊԲՀ» Արձանագրություն №5 առ 16.07.2019թ., որի 1-ին մասի 1.1 կետով հայտարարել է՝ «... ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 44-րդ կետով հանձնաժողովը որոշեց բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող...», իսկ նույն մասի 1.2 կետով որոշվել է՝ որ «... Արաջին տեղ զբաղեցրած բոլոր մասնակիցները ներկայացրել են համապատասխան հիմքեր...»:

Բացի այդ, նույն Արձանագրություն №5 1-ին մասի 1.3 կետում գնահատող հանձնաժողովը փաստում է, որ «...Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 46-րդ կետով հանձնաժողովը գնահատել է առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին և արձանագրում է հետևյալը (2-րդ ենթակետ)՝ «...«Էլեկտրոգրուպ» ՍՊ ընկերության 2-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում բացակայում է տեղեկատվությունը Վաճառողի միջոցներով և Վաճառողի հաշվին ապրանքի տեղադրման և կարգաբերման վերաբերյալ...» և հետո (4-րդ ենթակետ)՝ «...Ա/Ձ Արտյոմ Սահակյանի 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագրում բացակայում է տեղեկատվությունը Վաճառողի միջոցներով և Վաճառողի հաշվին ապրանքի տեղադրման և կարգաբերման վերաբերյալ...»:

Այնուհետև նույն որոշման 2-րդ մասով՝ «... Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 47-րդ կետով և հիմք ընդունելով «ԳՀԱՊՁԲ-2019/12-2-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1 մասի 7-րդ բաժնի 7.18 կետի պահանջները՝ հանձնաժողովը որոշեց երեք աշխատանքային օրով կասեցնել «ԳՀԱՊՁԲ-2019/12-2-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի նիստը և նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մասնակիցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել «անհամապատասխանությունները» («ԳՀԱՊՁԲ-2019/12-2-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի առ 16.07.2019թ Արձանագրություն №5-ի պատճենը՝ ընդամենը 2 (երկու) թերթ կցված է սույն բողոքին):

Ընկերությունը հայտնել է, որ ընթացակարգի հանձնաժողովն ընդամենը հաջորդ օրը՝ ս.թ. հուլիսի 17-ին, հրապարակում է ընթացակարգի Արձանագրություն №6-ը, որի՝

- 1.2 կետով՝ փաստել և ընդունել է, որ հենց ինքը գնահատող հանձնաժողովը պարզապես անտեղյակ էր Հրավերի բովանդակությունից և հարցի լուծման համար նրան անհրաժեշտ եղավ մասնակիցների օգնությունն, այն է՝ «...Մասնակիցների արձագանքներից պարզվել է, որ «ԳՀԱՊՁԲ-2019/12-2-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման հրավերը չի պարունակել Վաճառողի միջոցներով և Վաճառողի հաշվին ապրանքի տեղադրման և կարգաբերման վերաբերյալ պահանջները: Այդ հանգամանք ի հայտ գալուն պես, քարտուղարը դիմել Մասնակիցներին՝ խնդրելով հնարավորության դեպքում թույլատրել պայմանագրի նախագծում ներառել վերոհիշյալ պահանջները /«Գնումների մասին» ՀՀ օրենք, 36-րդ հոդված, 4-րդ մաս/...»:

- իսկ 2.2 կետով արձանագրել, որ «... Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը՝ հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացույցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը...» («ԳՀԱՊՁԲ-2019/12-2-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի առ 17.07.2019թ Արձանագրություն №6-ի պատճենը՝ ընդամենը 3 (երեք) թերթ կցված են սույն բողոքին):

Ընկերությունը հայտնել է, որ հատուկ բևեռում է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն առ այն, որ՝

- «ԳՀԱՊՁԲ-2019/12-2-ԵՊԲՀ» ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ համաձայն օրինական ուժի մեջ մտած ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի առ 27.03.2019թ № ԵԿԴ/5041/02/17 վճռի, իր աշխատանքի ընթացքում իրավասու էր օգտագործել արտադրողների պաշտոնական կայքերում ներկայացված տեղեկությունները: Ընդ որում, «ԵՊԲՀ» հիմնադրամն, որպես երրորդ անձ տվյալ դատական գործով, միանշանակ ստացել է նշված դատավճռի պատճենը:

- ՀՀ գնումների մասին գործող օրենսդրությունը՝ ներառյալ ենթաօրենսդրական ակտերը, բացառապես տարբերություն չի դնում տեխնիկական բնութագրերի, ապրանքային նշանի, ծագման երկրի և այլ տվյալների միջև և ոչ մի ձևով չի դասակարգում այդ տվյալներն ըստ կարևորության կամ նշանակության, այսինքն բոլոր վերը թվարկված տվյալներն օրենսդրի կողմից դիտվում են որպես իրավահավասար:

Եթե վերը թվարկված տվյալների որևիցե դասակարգում տեղի ունենար, ապա այդ փաստը պետք է ամրագրված լիներ ՀՀ գնումների մասին գործող օրենսդրությունում:

Նշված երկու իրավական հանգամանքների մասին գնահատող հանձնաժողովը հատուկ զգուշացվել է «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ կողմից ս.թ. հուլիսի 12-ին և 15-ին ուղղարկված վերը նշված նամակներում:

Պատվիրատուի գործելակերպի արդյունքում ստեղծվեծ մի իրավիճակ, երբ գնահատող հանձնաժողովը՝

- ամբողջովին անբացատրելի պատճառներով անտեսելով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ կողմից իրեն ս.թ. հուլիսի 12-ին և 15-ին ուղղարկված նամակներում ներկայացված փաստերն, անհերքելի ապացույցներն և հիմնավորված եզրակացություններն, ոչ մի քայլ չի ձեռնարկել 1-ին և 2-րդ չափաբաժիններով ընտրված մասնակիցների կողմից՝ թույլ տված կոպիտ խախտումների խնդրին ՀՀ գնումների մասին գործող օրենսդրության պահանջներին համապատասխան լուծում տալու համար.

- իրեն ներկայացված անհերքելի փաստերի վերաբերյալ պարզապես պատշաճ քննություն չի կատարել, ապացույցները պատշաճ չի գնահատել և եկել է սխալ եզրահանգման, մինչդեռ, ճշմարտության բացահայտումը պետական միջոցներով գնվող սարքավորումների պարագայում բխում է հենց Պատվիրատուի շահերից:

Ընկերությունը նշել է, որ հույսով է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն բողոքի քննարկման ընթացքում կպարզի, թե արդյոք ի՞նչն է իրականում հանդիսացել գնահատող հանձնաժողովի այսպիսի գործելակերպի իսկական պատճառն:

Ընկերությունը գտնում է, որ Պատվիրատուն ուղղակիորեն և կոպիտ խախտել է 16.12.2016 թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի (Հայտերի գնահատումը)՝

- 1-ին մասի դրույթները, այն է՝ «...Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են...»:

- 5-րդ մասի 2-րդ կետի դրույթները, այն է՝ «...հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը...»

- 6-րդ մասը, այն է՝ «...հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները...»:

Բացի այդ խախտվել են ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526 -Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի VII բաժնի ՝

-32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության դրույթները, այն է՝ «...ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր)...»;

- 46-րդ կետի դրույթները, այն է՝ «...հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները...».

- 47-րդ կետի դրույթները, այն է՝ «...անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը...».

- 67-րդ կետի դրույթները, այն է՝ «...Գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը...» և «... եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է...»:

Ամփոփելով, Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի «ԳՀԱՊՁԲ-2019/12-2-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ՝

- առ 16.07.2019թ. Արձանագրության N5-ի 1-ին մասի 1.1 կետով, այն է՝ « բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող...», 1.2 կետով այն ՝է «... Առաջին տեղ զբաղեցրած բոլոր մասնակիցները ներկայացրել են համապատասխան հիմքեր...», 1.3 կետով այն ՝է «...գնահատել է առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին...»՝ 1-ին չափաբաժնով Ա/Ձ Արտյոմ Սահակյան և 2-րդ չափաբաժնով «Էլեկտրոգրուպ» ՍՊԸ վերաբերյալ կայացրած որոշումները ճանաչել անվավեր, իսկ «Արտյոմ Սահակյան» և «Էլեկտրոգրուպ» ՍՊԸ հայտերը՝ մերժել:

- առ 17.07.2019թ. Արձանագրության N6-ի 2-րդ մասի 2.1 կետով, այն է՝ «...1-ին չափաբաժնով Ա/Ձ Արտյոմ Սահակյանին և 2-րդ չափաբաժնով «Էլեկտրոգրուպ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին...» և 2-րդ մասի 2.2 կետով, այն է՝ «...1-ին չափաբաժնով Ա/Ձ Արտյոմ Սահակյանին և 2-րդ չափաբաժնով «Էլեկտրոգրուպ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին կայացրած որոշումը ճանաչել անվավեր:

Ի լրումն բողոքի Ընկերությունը 31.07.2019թ. հայտնել է հետևյալը.

ՈՒսումնասիրելով «ԵՊԲՀ» հիմնադրամի 25.07.2019թ. թվագրված դիրքորոշման 5 կետը և նրան վերաբերվող Հավելվածը («...«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերի գնահատումը հաշվի չի առնվել: Վերոհիշյալի հիմնավորումը ներկայացված է Հավելվածում...») ստիպված ենք փաստել հետևյալը՝

Ա) «ԳՀԱՊՁԲ-2019/12-2-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման Հրավերի Պայմանագրի Հավելված №1-ի՝ «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» 1-ին չափաբաժնով՝ «Պրոյեկտոր 3» սևով սպիտակի վրա ամրագրված է, որ Պատվիրատուին պահանջվում է «Ճակատային թվային պրոյեկցիայի համակարգ հետևյալ բնութագրերով և լրակազմով.

ա) պրոֆեսիոնալ ինստալլացիոն լազերային պրոյեկտոր՝ 1 հատ.

բ) հատուկ Tele Zoom ոսպնյակ պրոյեկտորի համար՝ 1 հատ.

գ) հատուկ պատի կախոց պրոյեկտորի համար՝ 1 հատ»:

Այսինքն, Պատվիրատուն համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ կետի խմբավորել է 1-ին չափաբանում 3 (երեք) հատ առանձին բնութագրեր ունեցող լիովին տարբեր սարքավորումներ, իսկ Ա/Ձ Արտյոմ Սահակյանն իր հերթին առաջարկել է 2 (երկու) տարբեր արտադրողների՝ «Panasonic Corp.» և «Qualgear LLC» ընկերությունների

կողմից արտադրված 3 (երեք) հատ առանձին բնութագրեր ունեցող լիովին տարբեր սարքավորումներ:

ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526 -Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի VII բաժնի՝ 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությունը միանշանակ պահանջում է՝ «...ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր) ...»:

«ԳՀԱՊՁԲ-2019/12-2-ԵՊԲՀ» ընթացակարգի Հրավերի 4-րդ բաժնի 4.3 կետի «ե» պարբերությունը ուղղակիորեն պահանջում է, որ Մասնակիցը ներկայացնի «...հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր)...»: Հրավերի Հավելվածներ №3-ում և №3.1-ում նույնպես առկա են այդ պահանջները:

Եթե Հրավերով չպահանջվեր բոլոր ապրանքների առաջարկվող ապրանքային նշանները, արտադրողներիի անվանումները, ծագման երկիրներրը, ապրանքի տեխնիկա-կան բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր), ապա այդ մասին գոնե մեկ տողով կգրվեր, սակայն այդպիսի տեղեկություններ Հրավերում պարզապես իսպառ բացակայում են:

Զուտ տեղեկատվության համար նշենք, որ Չինաստանում արտադրվող Panasonic PT-MZ770U/PT-MZ770E պրոյեկտորների համար արտադրողն, որպես առանձին ձեռք բերվող հավելյալ (օպցիոնալ) ապրանք, առաջարկում է 6 (վեց) հատ բոլորովին տարբեր տեսակի ոսպնյակներ, որոնցից մեկն էլ հանդիսանում է մասնակցի կողմից առաջարկված և Ճապոնիայում, այլ ոչ թե Չինաստանում արտադրված ET-ELT22 ոսպնյակը:

Այստեղ պարզ հարց է առաջանում՝ կոնկրետ ո՞ր օրենսդրական կամ ենթաօրենսդրական ակտով և կոնկրետ նրանց ո՞ր դրույթներով է առաջնորդվել գնահատող հանձնաժողովն որոշելով չպահանջել Ա/Ձ Արտյոմ Սահակյանից ներկայացնել առաջարկվող 2 (երկու) տարբեր արտադրողների 3 (երեք) առանձին բնութագրեր ունեցող լիովին տարբեր սարքավորումների ապրանքային նշանները, արտադրողների անվանումները, ծագման երկիրները, ապրանքի տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր)...»:

Եթե գնահատող հանձնաժողովը ձախողվի մատնանշել նման իրավական ակտ, ապա դա կհանդիսանա ևս մեկ ապացույց, որ Պատվիրատուն ուղղակիորեն, դիտավորյալ և կոպիտ խախտել է ՀՀ գնումների մասին գործող օրենսդրության պահանջները:

Բ) «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովին դեռևս ս.թ. հուլիսի 15-ին ուղարկված նամակում հատուկ շեշտել է, «որ ՀՀ գնումների մասին գործող օրենսդրությունը՝ ներառյալ ենթաօրենսդրական ակտերը, **բացառապես տարբերություն չի դնում** *տեխնիկական բնութագրերի, ապրանքային նշանի, ծագման երկրի և այլ տվյալների միջև* և **ոչ մի ձևով չի դասակարգում** այդ տվյալներն ըստ **կարևորության** կամ **նշանակության**, այսինքն բոլոր վերը թվարկված տվյալներն օրենսդրի կողմից դիտվում են **որպես իրավահավասար**: Եթե վերը թվարկված տվյալների **որևիցե դասակարգում** տեղի ունենար, ապա այդ փաստը պետք է **ամրագրված լիներ** ՀՀ գնումների մասին գործող օրենսդրությունում:»

Եթե Պատվիրատուն գտնում է, որ «...գնահատվում է տեխնիկական բնութագրի համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին և ոչ թե անվանումը, այդ խնդիրը կարող է առաջանալ միայն ապրանքը հանձնելու ժամանակ...», այսինքն՝ ուղղակիորեն անհամաձայնություն է հայտնում ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526 -Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի պահանջների նկատմամբ, ապա մեր խորին համոզմամբ այստեղ գոյություն ունի հարցի ընդամենը մեկ լուծում՝ դիմել դատական ատյաններ: Սակայն մինչ դատարանի որոշումն օրինական ուժի մեջ մտնելը Պատվիրատուն պարտավոր է անխտիր կատարել ՀՀ գնումների մասին գործող օրենսդրության պահանջները:

Տվյալ նկատառումը հավասարաչափ վերաբերվում է թե 1-ին, թե 2-րդ չափաբաժիններով գնահատող հանձնաժողովի կողմից ընդունված որոշումներին:

Գ) «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովին ս.թ. հուլիսի 15-ի ուղարկած նամակին կից ներկայացրել է արտադրողի՝ամերիկյան Draper ընկերության պաշտոնական WEB կայքից արտատպումը (Screenshot), որտեղ հստակ ներկայացված են LUMA 2 (այլ ոչ թե LUMA 02, ինչպես ներկայացված է ընթացակարգի 2-րդ չափաբաժնով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից՝ «Էլեկտրոգրուպ» ՍՊԸ կողմից) պրոյեկցիոն էկրանի բնութագրերը:

Ավելին, նույն նամակում ներկայացված էր նաև վերոհիշյալ արտատպման հիման վրա հիմնված շատ պարզ և համառոտ համեմատական աղյուսակ, որտեղ հստակ ապացուցված էր, որ առաջարկած ապրանքն իր տեխնիկական բնութագրերով (էկրանի իրանի և պատկերի չափսերը) **չի համապատասխանում** Հրավերի **պահանջներին:**

Պատվիրատուի այն պնդմանն, որ «պատկերի չափսերը պահանջվածից ավելի լավն են՝ 356 x 222 սմ» ստիպված ենք փաստել, որ «ԳՀԱՊՁԲ-2019/12-2-ԵՊԲՀ» Հրավերի Պայմանագրի Հավելված №1-ի՝ «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» 2-րդ չափաբաժնով ամրագրված է հենց «Պատկերի չափսերը (լայնություն x բարձրություն)՝ **350** x **219** սմ» առանց որևիցե հավելումների և ոչ ավել և ոչ պակաս, ինչը պարզապես բացառում է որևիցե շեղում պահանջված չափսերից:

Ինչ վերաբերվում է Համալսարանի դիրքորոշման մեջ բարձրացված հարցերին՝

1) Եթե գնահատող հանձնաժողովն իրեն նույնիսկ մի թեթև նեղություն տար՝

- և թե ուշադիր ուսումնասիրեր իրեն ս.թ. հուլիսի 15-ի «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի նամակին կից ուղարկած արտադրողի՝ամերիկյան Draper ընկերության պաշտոնական WEB կայքից արտատպումը (Screenshot), որը ներկայացվել է նաև կից թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/54 բողոքին, որտեղ պարզ երևում է, որ առաջարկված պրոյեկցիոն էկրանի ճիշտ անվանումն է LUMA 2, այլ ոչ թե LUMA 02, ինչպես ներկայացված է ընթացակարգի 2-րդ չափաբաժնով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից՝ «Էլեկտրոգրուպ» ՍՊԸ կողմից ներկայացված Հրավերի N3.1 հավելվածում,

- և թե բարեհաճեր այցելել նշված արտադրողի պաշտոնական WEB կայքը (https://www.draperinc.com/), որտեղ սևով սպիտակի վրա նշված է այդ ընկերության ճիշտ անվանումը՝ «Draper, Inc.» և ոչ թե միայն Draper, ինչպես պնդում է «Էլեկտրոգրուպ» ՍՊԸ-ն, ապա այդ հարցը պարզապես չէր առաջանա:

2) Ինչ վերաբերվում է այն հարցին, թե «ինչպես է «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն որոշել Համալսարանի իրական պահանջը», ապա հնարավոր է, որ հանձնաժողովի քարտուղար

Տ.Միրզոյանն և Համալսարանի որոշ այլ աշխատակիցներ պարզապես անտեղյակ են, որ սույն հրավերի առաջին երկու չափաբաժինների առարկա դարձած ճակատային պրոյեկցիայի համակարգը (ինստալիացիոն պրոյեկտոր իր հավելյալ ոսպնյակով և կախիչով և պրոյեկցիոն էկրան) Համալսարանի տեխնիկական ստորաբաժանման խնդրանքով՝ սկզբից մինչև վերջ, մի քանի անգամ տեղադրման վայր այցելելով և կատարելով անհրաժեշտ ուսումնասիրություններ և, հարկ է շեշտել, բոլորովին անվճար նախագծել է հենց «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի սերտիֆիկացված ինժեներական անձնակազմը, իսկ ՀՀ-ում, ցավոք, մինչ օրս պարզապես չկա մի այլ կազմակերպություն, որն ի վիճակի է պրոյեկտորի լրացուցիչ ոսպնյակի և նրա հետ համակցված պրոյեկցիոն էկրանի բավականին պարզ հաշվարկ կատարել:

Եվ վերջինը՝ «ԳՀԱՊՁԲ-2017/12-1-ԵՊԲՀ» ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հենց նույնանման ոչ պրոֆեսիոնալ և իրավական տեսակետից լիովին առ ոչինչ գործողությունները հանգեցրին ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի առ 27.03.2019թ № ԵԿԴ/5041/02/17 վճռի, որով որպես հետևանք անվավեր է ճանաչվել Համալսարանի և «Վանդիստ» ՍՊԸ-ի միջև 18.10.2017թ. կնքված պայմանագիրը (Ի դեպ գործը նույնպես վերաբերվում է թվային պրոյեկտորների մատակարարմանը) իր բոլոր հետևանքներով:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 25.07.2019թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

Ուսումնասիրելով ներկայացված բողոքը, գտնում ենք որ այն անհիմն է՝ հաշվի առնելով ստորև ներկայացված հիմնավորումները.

Պատվիրատուի կողմից սույն թվականի հունիսի 25-ին հայտարարվել է «ԳՀԱՊՁԲ-2019/12-2-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոտեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների գնման ընթացակարգ, որի հայտերի բացման նիստը տեղի է ունեցել հուլիսի 2-ին և որին «Ֆիրմա Ալֆա» ՍՊ ընկերությունը հայտ չի ներկայացրել:

Հուլիսի 12-ին բավարարելով «Ֆիրմա Ալֆա» ՍՊ ընկերության հուլիսի 10-ի խնդրանքը՝ տրամադրվելով Ընթացակարգի մասնակիցների որակավորման փաստաթղթերը, որոնք տրման պահի դրությամբ հանձնաժողովի կողմից գնահատված չէին:

Հուլիսի 12-ին և 15-ին ընթացակարգի քարտուղարը «Ֆիրմա Ալֆա» ՍՊ ընկերությունից ստացել է ընթացակարգի որակավորման փաստաթղթերի համապատասխանության գնահատում հրավերի պահանջների նկատմամբ, որոնք, որպես կողմնակի գնահատական, փոխանցվել են գնահատող հանձնաժողովին:

Հուլիսի 16-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովն արձանագրել է մասնակիցների կողմից ներկայացված հայտարարությունների համապատասխանությունը իրականությանը /ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվության մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 44-րդ կետ/, և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից համապատասխան հիմքերի ներկայացումը /որակավորման փաստաթղթերի ներկայացման մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 46-րդ կետ/, ինչպես նաև, առաջնորդվելով գնման հայտով, գնահատել է մասնակիցների որակավորման փաստաթղթերը, արձանագրել առկա անհամապատասխանությունները և վերջիններիս տրամադրվել է դրանց շտկման համար օրենքով սահմանված հնարավորություն /ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 47-րդ կետ և «ԳՀԱՊՁԲ-2019/12-2-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ բաժնի 7.18-րդ կետ/:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊ ընկերության կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերի գնահատումը հաշվի չի առնվել: Վերոհիշյալի հիմնավորումը ներկայացված է Հավելվածում:

Հուլիսի 17-ին Ընթացակարգի քարտուղարը Ընթացակարգի մասնակից Ա/Ձ Արտյոմ Սահակյանից ստացել է գրություն, որում մասնակիցը խնդրել է մեջբերել և/կամ հղում կատարել հրավերում «Վաճառողի միջոցներով և Վաճառողի հաշվին ապրանքի տեղադրում և կարգաբերում» պահանջը: Նույն խնդրանքով, բայց արդեն բանավոր

/հեռախոսով/ դիմել է նաև Ընթացակարգի մասնակից «Էլեկտրոգրուպ» ՍՊ ընկերությունը:

Հուլիսի 17-ին ստանալով մասնակիցների արձագանքները՝ քարտուղարը համեմատել է պատասխանատու ստորաբաժանման կողմից տրված հայտը, որի հիման վրա կատարվել է գնահատումը, և հրավերը, և արձանագրել է քարտուղարի վրիպում. այն է հրավերում չի ներառվել «Վաճառողի միջոցներով և Վաճառողի հաշվին ապրանքի տեղադրում և կարգաբերում» պահանջը, որն առկա էր գնման հայտում:

Նույն օրը քարտուղարը նամակ-խնդրանքով դիմել է այն մասնակիցներին, որոնց որակավորման փաստաթղթերում վերոհիշյալ պահանջի բացակայությունը գնահատվել է որպես հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություն /«Էլեկտրոգրուպ» ՍՊԸ, «Տեսակենտրոն» ՍՊԸ և Ա/Ձ Արտյոմ Սահակյան/, ստանալու մասնակիցների թույլտվությունը հնարավորության դեպքում պայմանագրում ներառել նաև «Վաճառողի միջոցներով և Վաճառողի հաշվին ապրանքի տեղադրում և կարգաբերում» պահանջը /16.12.2016թ. «Գնումների մասին» ՀՀ օրենք, 36-րդ հոդված, 4-րդ մաս/: /նամակները կցվում են/:

Ստանալով Մասնակիցների թույլտվությունը՝ հուլիսի 17-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովն արձանագրել է քարտուղարի վրիպումը, մասնակիցների համաձայնությունը, «Տեսակենտրոն» ՍՊ ընկերության տեխնիկական բնութագրերում առկա անհամապատասխանությունների շտկումը /այլ բնույթի անհամապատասխանություններ, որոնք արձանագրվել էին հուլիսի 16-ի նիստում, Արձանագրություն 5/ և հաստատելով ընտրված մասնակիցներին սահմանել անգործության ժամկետ /16.12.2016թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդված/: /արձանագրությունը կցվում է, Արձանագրություն 6/:

Տեղեկանալով «Ֆիրմա Ալֆա» ՍՊ ընկերության կողմից հուլիսի 22-ին ներկայացված բողոքի մասին՝ հուլիսի 24-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովը կասեցրել է «ԳՀԱՊՁԲ-2019/12-2-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը թիվ 1 և 2 չափաբաժինների մասով մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման ուժի մեջ մտնելու օրը ներառյալ /16.12.2016թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մաս/: /արձանագրությունը կցվում է, Արձանագրություն 7/:

Չափաբաժին 1. Պրոյեկտոր 3

«ԳՀԱՊՁԲ-2019/12-2-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով 1-ին չափաբաժնի համար սահմանված չեն եղել ա) պրոյեկտորի ոսպնյակի արտադրողի անվանումը և ծագման երկիրը, բ) պրոյեկտորի համար նախատեսված հատուկ պատի կախոցի արտադրողի անվանումը և ծագման երկիրը, գ) օրենքով սահմանված կարգով գնահատվում է տեխնիկական բնութագրի համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին և ոչ թե անվանումը, այդ խնդիրը կարող է առաջանալ միայն ապրանքը հանձնելու ժամանակ, երբ հանձնվող ապրանքի անվանումը չի համապատասխանի պայմանագրում ամրագրված անվանմանը, դ) Մասնակիցը հաստատել է ապրանքի իր միջոցներով տեղադրումը և կարգաբերումը, ինչպես նաև երեք տարվա երաշխիքային սպասարկումը, ինչը պահանջվել է Պատվիրատուի կողմից, իսկ թե ինչպես է Մասնակիցը պատրաստվում ապահովել այդ պահանջը Պատվիրատուի գործառույթների տիրույթից դուրս է: /հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը կցվում է/

Չափաբաժին 2. Պրոյեկցիոն էկրան 1

ա) օրենքով սահմանված կարգով գնահատվում է տեխնիկական բնութագրի համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին և ոչ թե անվանումը, այդ խնդիրը կարող է առաջանալ միայն ապրանքը հանձնելու ժամանակ, երբ հանձնվող ապրանքի անվանումը չի համապատասխանի պայմանագրում ամրագրված անվանմանը,

բ) «ԳՀԱՊՁԲ-2019/12-2-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով 1-ին չափաբաժնի համար սահմանված չի եղել պրոյեկցիոն էկրանի շրջանակային և էլեկտրական կառավարվող լինելը, իսկ ինչ վերաբերվում է չափսերին, ապա Մասնակցի կողմից ներկայացված էկրանի չափսերը ամբողջությամբ նույնն են պահանջվածի հետ՝ 366x235սմ, իսկ պատկերի չափսերը պահանջվածից ավելի լավն են՝ 356x222սմ: /հրավերը և Մասնակցի որակավորման փաստաթղթերը կցվում են/

Պատվիրատուն խնդրել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին հատուկ ուշադրություն դարձնել հետևյալ հանգամանքներին.

Եթե Չափաբաժին 2-ի անվանումը և արտադրողի անվանումը սխալ են և չեն համապատասխանում իրականությանը, ինչպես է ՀՀ-ում հրապարակվող բոլոր մրցույթներին ուշադրությամբ հետևող, տարածաշրջանի AV-ոլորտում միակ

մասնագիտացված կազմակերպությունը՝ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն, գնահատել դրա համապատասխանությունը հրավերի պահանջներին,

Եթե «ԳՀԱՊՁԲ-2019/12-2-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով Չափաբաժին 2-ի համար սահմանված չեն եղել պրոյեկցիոն էկրանի շրջանակային և էլեկտրական կառավարվող լինելը, ինչպես է «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն որոշել Համալսարանի իրական պահանջը:

Պատվիրատուն, անդրադառնալով «Ֆիրմա Ալֆա» ՍՊ ընկերության բողոքում ներառված դիտարկումներին, խնդրել է արգելել մասնակիցներին և կողմնակի դիտորդներին, այս դեպքում «Ֆիրմա Ալֆա» ՍՊ ընկերությանը, որակումներ տալ Պատվիրատուների գործողություններին, այս դեպքում մեջբերում եմ. «Պատվիրատուն ուղղակիորեն և կոպիտ խախտել է 16.12.2016թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, 5-րդ մասի 2-րդ կետի, 6-րդ մասի դրույթները ...», հատկապես, որ Համալսարանի կողմից խստագույնս պահպանվել են գնումների օրենսդրության բոլոր պահանջները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետերի համաձայն՝

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, 5-րդ մասի 2-րդ կետի, 6-րդ մասի համաձայն՝

Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

Պատվիրատուն հաշվի առնելով վերը ներկայացված պարզաբանումները և փաստարկները առաջարկել է բողոքի քննության ժամանակ նշված հանգամանքները դարձնել քննարկման առարկայի առանցք, ինչը իր համոզմամբ հիմք կհանդիսանա ներկայացված բողոքի մերժման համար:

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 25.07.2019թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

<u>4. ԳԲՔԱ-ՆԳ-2019/54 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2019/54 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ կարիքների համար համար էլեկտրոտեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարված ԳՀԱՊՁԲ-2019/12-2-ԵՊԲՀ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

2. Ընթացակարգի հրավերով Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների համար նախատեսվել է հետևյալ տեխնիկական բնութագրերը.

Հ/հ	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը

1	Պրոյեկտոր 3	3. Ճակատային թվային պրոյեկցիայի համակարգ հետևյալ բնութագրերով և լրակազմով. ա) պրոֆեսիոնալ ինստալլացիոն լազերային պրոյեկտոր 1 հատ. պատկերի արտացոլման հեղուկ-բյուրեղային տեխնոլոգիա/ Projection technology՝ 3 x LCD Technology, հատուկ հնարավորություններ՝ լազերային լույսի աղբյուր, 24/7 աշհատանքային ռեժիմ, փոշի դիմացկուն փակ իրան միակողմանի օդափոխման նախագծմամբ, օպտիմիզացնում է պատկերը պայծառ տարածքներում, պատկերի ավտոմատ պտույտ, արագ միացում և արագ անջատում, պատկերը պատկերի մեջ ֆունկցիա, պայծառությունը՝ 8000 ANSI Lumens, կետայնությունը՝ իսկական (ֆիզիկական)/Native - WUXGA (1,920 x 1,200 pixels), արհեստական/Compressed - 4K (4,096 x 2,160 pixels) resolution, կողմերի հարաբերակցություն (իսկական/արհեստական)՝ 16:10 / 16:9, 4:3, լազերային լույսի աղբյուր, կոնտրաստը / Contrast Ratio՝ 3,000,000:1, 5 հատ լրացուցիչ ոսպնյակներ, ուղղահայաց և հորիզոնական սեղանային շեղումների շտկում (կախված ոսպնյակից), պատկերի չափերը՝ 40” - 400” diagonal, օպտիկական առանցքի շեղում, ներկառուցված բարձրախոս, մուտքային տերմինալներ / Input terminals: HDMI 19-pin x 2 (HDCP2.2 and Deep color compatible); BNC x 5 (female), RGB/Y PB/PR (CB/CR); D-Sub 15 p x 1 (female), RGB/Y PB/PR (CB/CR); Pin jack x 1 (Video); M3 stereo jack x 1(L-R); M3 stereo jack x 1(L-R); Pin jack x 2(L-R) (Audio), ելքային տերմինալներ / Output terminals: D-Sub 15 p x 1(female), RGB/Y PB/PR (CB/CR); M3 jack x 1, 0 V[rms] to 2.0 V[rms] variable, output imedance 2.2 k ohms and less: Երաշխիքային սպասարկման ժամկետը՝ թվային պրոյեկտորի համար՝36 ամիս, լազերային լույսի աղբյուրի համար՝ 3 տարի կամ աշխատանքային 10.000 ժամ: բ) հատուկ Tele Zoom ոսպնյակ պրոյեկտորի համար 1 հատ. պրոյեկցիոն հարաբերակցություն՝ 2.72-4.48:1: Երաշխիքային սպասարկման ժամկետը՝ 36 ամիս: գ) հատուկ պատի կախոց պրոյեկտորի համար 1 հատ: Երաշխիքային սպասարկման ժամկետը՝ 36 ամիս:
2	Պրոյեկցիոն էկրան 1	Ճակատային պրոյեկցիայի պատին ամրացվող պրոյեկցիոն էկրան 5 սմ սահմաններով. չափսերը (լայնություն x բարձրություն)՝ 366x235սմ, պատկերի չափսերը (լայնություն x բարձրություն)՝ 350x219սմ: Կողմերի հարաբերակցություն՝ 16:10: Երաշխիքային սպասարկման ժամկետը՝ 24 ամիս:

4. Ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտեր են ներկայացրել «Էլեկտրոգրուպ» ՍՊԸ-ն և Ա/Ձ Արտյոմ Սարգսյանը:

5. Ա/Ձ Արտյոմ Սարգսյանը «ԳՀԱՊՁԲ-2019/12-2-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի մասնակցության հայտի թիվ N 3.1 հավելվածով Ընթացակարգի 1-ին չափաբաժնի գնման առարկայի համար ներկայացրել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Հ/հ	անվանումը	Ապրանքային նշանը	Արտադրողի անվանումը	Ծագման երկիրը	Տեխնիկական բնութագրերը
1	Ճակատային թվային պրոյեկցիայի համակարգ	Panasonic PT-MZ770U	Panasonic Corporation	*Չինաստան*	պրոֆեսիոնալ ինստալլացիոն լազերային պրոյեկտոր 1 հատ. պատկերի արտացոլման հեղուկ-բյուրեղային տեխնոլոգիա/ Projection technology՝ 3 x LCD Technology, հատուկ հնարավորություններ՝ լազերային լույսի աղբյուր, 24/7 աշհատանքային ռեժիմ, փոշի

					դիմացկուն փակ իրան միակողմանի օդափոխման նախագծմամբ, օպտիմիզացնում է պատկերը պայծառ տարածքներում, պատկերի ավտոմատ պտույտ, արագ միացում և արագ անջատում, պատկերը պատկերի մեջ ֆունկցիա, պայծառությունը՝ 8000 ANSI Lumens, կետայնությունը՝ իսկական (ֆիզիկական)/Native - WUXGA (1,920 x 1,200 pixels), արհեստական/Compressed - 4K (4,096 x 2,160 pixels) resolution, կողմերի հարաբերակցություն (իսկական/արհեստական)՝ 16:10 / 16:9, 4:3, լազերային լույսի աղբյուր, կոնտրաստը / Contrast Ratio՝ 3,000,000:1, 5 հատ լրացուցիչ ոսպնյակներ, ուղղահայաց և հորիզոնական սեղանային շեղումների շտկում (կախված ոսպնյակից), պատկերի չափերը՝ 40” - 400” diagonal, օպտիկական առանցքի շեղում, ներկառուցված բարձրախոս, մուտքային տերմինալներ / Input terminals: HDMI 19-pin x 2 (HDCP2.2 and Deep color compatible); BNC x 5 (female), RGB/Y PB/PR (CB/CR); D-Sub 15 p x 1 (female), RGB/Y PB/PR (CB/CR); Pin jack x 1 (Video); M3 stereo jack x 1(L-R); M3 stereo jack x 1(L-R); Pin jack x 2(L-R) (Audio), ելքային տերմինալներ / Output terminals: D-Sub 15 p x 1(female), RGB/Y PB/PR (CB/CR); M3 jack x 1, 0 V[rms] to 2.0 V[rms] variable, output imedance 2.2 k ohms and less: Երաշխիքային սպասարկման ժամկետը՝ թվային պրոյեկտորի համար՝36 ամիս, լազերային լույսի աղբյուրի համար՝ 3 տարի կամ աշխատանքային 10.000 ժամ: բ) հատուկ Tele Zoom ոսպնյակ պրոյեկտորի համար 1 հատ. պրոյեկցիոն հարաբերակցություն՝ 2.72-4.48:1: Երաշխիքային սպասարկման ժամկետը՝ 36 ամիս: գ) հատուկ պատի կախոց պրոյեկտորի համար 1 հատ: Երաշխիքային սպասարկման ժամկետը՝ 36 ամիս:

6. «Էլեկտրոգրուպ» ՍՊԸ-ն «ԳՀԱՊՁԲ-2019/12-2-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի մասնակցության հայտի թիվ N 3.1 հավելվածով Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի գնման առարկայի համար ներկայացրել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Հ/հ	անվանումը	Ապրանքային նշանը	Արտադրողի անվանումը	Ծագման երկիրը	Տեխնիկական բնութագրերը
2	Պրոյեկցիոն էկրան 1	Luma 02	Draper	Չինաստան	Ճակատային պրոյեկցիայի պատին ամրացվող պրոյեկցիոն էկրան 5 սմ սահմաններով. չափսերը (լայնություն x բարձրություն)՝ 366x235սմ, պատկերի չափսերը (լայնություն x բարձրություն)՝ 350x219սմ: Կողմերի հարաբերակցություն՝ 16:10: Երաշխիքային սպասարկման ժամկետը՝ 24 ամիս:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.07.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ա/Ձ Արտյոմ Սարգսյանը Ընթացակարգի 1-ին, իսկ

«Էլեկտրոգրուպ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 2-րդ չափաբաժինների մասով ճանաչվել են առաջին տեղ, այնուհետև՝ ընտրված մասնակիցներ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի 22.07.2019թ. բողոքը և ի լրումն բողոքի ներկայացված գրությունը՝ կից փաստաթղթերով, «ԳՀԱՊՁԲ-2019/12-2-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված

դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Նույն կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Կարգի 48-րդ կետը սահմանում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ կարիքների համար համար էլեկտրոտեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԳՀԱՊՁԲ-2019/12-2-ԵՊԲՀ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հրավերով 1-ին և 2-րդ չափաբաժինների գնման առարկաների համար նախատեսվել է հետևյալ տեխնիկական բնութագրերը.

Հ/հ	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը

1	Պրոյեկտոր 3	Ճակատային թվային պրոյեկցիայի համակարգ հետևյալ բնութագրերով և լրակազմով. ա) պրոֆեսիոնալ ինստալլացիոն լազերային պրոյեկտոր 1 հատ. պատկերի արտացոլման հեղուկ-բյուրեղային տեխնոլոգիա/ Projection technology՝ 3 x LCD Technology, հատուկ հնարավորություններ՝ լազերային լույսի աղբյուր, 24/7 աշհատանքային ռեժիմ, փոշի դիմացկուն փակ իրան միակողմանի օդափոխման նախագծմամբ, օպտիմիզացնում է պատկերը պայծառ տարածքներում, պատկերի ավտոմատ պտույտ, արագ միացում և արագ անջատում, պատկերը պատկերի մեջ ֆունկցիա, պայծառությունը՝ 8000 ANSI Lumens, կետայնությունը՝ իսկական (ֆիզիկական)/Native - WUXGA (1,920 x 1,200 pixels), արհեստական/Compressed - 4K (4,096 x 2,160 pixels) resolution, կողմերի հարաբերակցություն (իսկական/արհեստական)՝ 16:10 / 16:9, 4:3, լազերային լույսի աղբյուր, կոնտրաստը / Contrast Ratio՝ 3,000,000:1, 5 հատ լրացուցիչ ոսպնյակներ, ուղղահայաց և հորիզոնական սեղանային շեղումների շտկում (կախված ոսպնյակից), պատկերի չափերը՝ 40” - 400” diagonal, օպտիկական առանցքի շեղում, ներկառուցված բարձրախոս, մուտքային տերմինալներ / Input terminals: HDMI 19-pin x 2 (HDCP2.2 and Deep color compatible); BNC x 5 (female), RGB/Y PB/PR (CB/CR); D-Sub 15 p x 1 (female), RGB/Y PB/PR (CB/CR); Pin jack x 1 (Video); M3 stereo jack x 1(L-R); M3 stereo jack x 1(L-R); Pin jack x 2(L-R) (Audio), ելքային տերմինալներ / Output terminals: D-Sub 15 p x 1(female), RGB/Y PB/PR (CB/CR); M3 jack x 1, 0 V[rms] to 2.0 V[rms] variable, output imedance 2.2 k ohms and less: Երաշխիքային սպասարկման ժամկետը՝ թվային պրոյեկտորի համար՝36 ամիս, լազերային լույսի աղբյուրի համար՝ 3 տարի կամ աշխատանքային 10.000 ժամ: բ) հատուկ Tele Zoom ոսպնյակ պրոյեկտորի համար 1 հատ. պրոյեկցիոն հարաբերակցություն՝ 2.72-4.48:1: Երաշխիքային սպասարկման ժամկետը՝ 36 ամիս: գ) հատուկ պատի կախոց պրոյեկտորի համար 1 հատ: Երաշխիքային սպասարկման ժամկետը՝ 36 ամիս:
2	Պրոյեկցիոն էկրան 1	Ճակատային պրոյեկցիայի պատին ամրացվող պրոյեկցիոն էկրան 5 սմ սահմաններով. չափսերը (լայնություն x բարձրություն)՝ 366x235սմ, պատկերի չափսերը (լայնություն x բարձրություն)՝ 350x219սմ: Կողմերի հարաբերակցություն՝ 16:10: Երաշխիքային սպասարկման ժամկետը՝ 24 ամիս:

Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Էլեկտրոգրուպ» ՍՊԸ-ն և Ա/Ձ Արտյոմ Սարգսյանը հայտի թիվ 1 հավելվածով հայտարարել և հավաստել են, որ «ԳՀԱՊՁԲ-2019/12-2-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով սույն դիմում- հայտարարությունում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին և պարտավորվում են առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու

դեպքում հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իրենց կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը.

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետի 3.1-րդ ենթակետով սահմանվել է, որ Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի հավելված N 3-ով նախատեսված գրությունը, որին կցվում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 3.1-ի:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.07.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ա/Ձ Արտյոմ Սարգսյանը Ընթացակարգի 1-ին, իսկ «Էլեկտրոգրուպ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 2-րդ չափաբաժինների մասով ճանաչվել են առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ, որոնց սահմանված կարգով ծանուցվել է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, ինչպես նաև հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ա/Ձ Արտյոմ Սարգսյանը «ԳՀԱՊՁԲ-2019/12-2-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի մասնակցության հայտի թիվ N 3.1 հավելվածով Ընթացակարգի 1-ին չափաբաժնի գնման առարկայի համար ներկայացրել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Հ/հ	անվանումը	Ապրանքային նշանը	Արտադրողի անվանումը	Ծագման երկիրը	Տեխնիկական բնութագրերը
1	Ճակատային թվային պրոյեկցիայի համակարգ	Panasonic PT-MZ770U	Panasonic Corporation	*Չինաստան*	պրոֆեսիոնալ ինստալլացիոն լազերային պրոյեկտոր 1 հատ. պատկերի արտացոլման հեղուկ-բյուրեղային տեխնոլոգիա/ Projection technology՝ 3 x LCD Technology, հատուկ հնարավորություններ՝ լազերային լույսի աղբյուր, 24/7 աշհատանքային ռեժիմ, փոշի դիմացկուն փակ իրան միակողմանի օդափոխման նախագծմամբ, օպտիմիզացնում է պատկերը պայծառ տարածքներում, պատկերի ավտոմատ պտույտ, արագ միացում և արագ անջատում, պատկերը պատկերի մեջ ֆունկցիա, պայծառությունը՝ 8000 ANSI Lumens, կետայնությունը՝ իսկական (ֆիզիկական)/Native - WUXGA (1,920 x 1,200 pixels), արհեստական/Compressed - 4K (4,096 x 2,160 pixels) resolution, կողմերի հարաբերակցություն (իսկական/արհեստական)՝ 16:10 / 16:9, 4:3, լազերային լույսի աղբյուր, կոնտրաստը / Contrast Ratio՝ 3,000,000:1, 5 հատ լրացուցիչ ոսպնյակներ,

					ուղղահայաց և հորիզոնական սեղանային շեղումների շտկում (կախված ոսպնյակից), պատկերի չափերը՝ 40” - 400” diagonal, օպտիկական առանցքի շեղում, ներկառուցված բարձրախոս, մուտքային տերմինալներ / Input terminals: HDMI 19-pin x 2 (HDCP2.2 and Deep color compatible); BNC x 5 (female), RGB/Y PB/PR (CB/CR); D-Sub 15 p x 1 (female), RGB/Y PB/PR (CB/CR); Pin jack x 1 (Video); M3 stereo jack x 1(L-R); M3 stereo jack x 1(L-R); Pin jack x 2(L-R) (Audio), ելքային տերմինալներ / Output terminals: D-Sub 15 p x 1(female), RGB/Y PB/PR (CB/CR); M3 jack x 1, 0 V[rms] to 2.0 V[rms] variable, output imedance 2.2 k ohms and less: Երաշխիքային սպասարկման ժամկետը՝ թվային պրոյեկտորի համար՝36 ամիս, լազերային լույսի աղբյուրի համար՝ 3 տարի կամ աշխատանքային 10.000 ժամ: բ) հատուկ Tele Zoom ոսպնյակ պրոյեկտորի համար 1 հատ. պրոյեկցիոն հարաբերակցություն՝ 2.72-4.48:1: Երաշխիքային սպասարկման ժամկետը՝ 36 ամիս: գ) հատուկ պատի կախոց պրոյեկտորի համար 1 հատ: Երաշխիքային սպասարկման ժամկետը՝ 36 ամիս:

«Էլեկտրոգրուպ» ՍՊԸ-ն «ԳՀԱՊՁԲ-2019/12-2-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի մասնակցության հայտի թիվ N 3.1 հավելվածով Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի գնման առարկայի համար ներկայացրել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Չ/h	անվանումը	Ապրանքային նշանը	Արտադրողի անվանումը	Ծագման երկիրը	Տեխնիկական բնութագրերը
2	Պրոյեկցիոն էկրան 1	Luma 02	Draper	Չինաստան	Ճակատային պրոյեկցիայի պատին ամրացվող պրոյեկցիոն էկրան 5 սմ սահմաններով. չափսերը (լայնություն x բարձրություն)՝ 366x235սմ, պատկերի չափսերը (լայնություն x բարձրություն)՝ 350x219սմ: Կողմերի հարաբերակցություն՝ 16:10: Երաշխիքային սպասարկման ժամկետը՝ 24 ամիս:

Այսպիսով, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով բողոքի առարկա հանդիսացող «ԳՀԱՊՁԲ-2019/12-2-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրերը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով, «Էլեկտրոգրուպ» ՍՊԸ-ի և Ա/Ձ Արտյոմ Սարգսյանի Ընթացակարգի հրավերի 3.1 հավելվածներով ներկայացրած տեխնիկական բնութագրերը, գտնում եմ, որ «Էլեկտրոգրուպ» ՍՊԸ-ի և Ա/Ձ Արտյոմ Սարգսյանի կողմից

ներկայացված տեխնիկական բնութագրերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին (հրավերի պահանջներին):

Ինչ վերաբերվում է բողոքաբերի այն պնդմանը, որ Ա/Ձ Արտյոմ Սահակյանը Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով չի ներկայացրել Panasonic PT-MZ770U մակնիշի պրոյեկտորի ET-ELT22 ոսպնյակի արտադրողի, ինչպես նաև հատուկ պատի կախոցի արտադրողների անվանումները և ծագման երկիրը, նաև մասնակցի կողմից տեխնիկական բնութագրում նշված QualGear Pr-AV նշանակում է ոչ թե կախոցի կոնկրետ մակնիշը, այլ նրա սերիան, ապա սույն մասով արձանագրում եմ, որ լրակազմում ներառված ապրանքների մասով մասնակիցը չի պարտավորվել ներկայացնելու արտադրողների ապրանքային նշանը, արտադրողի անվանումը և ծագման երկիրը, քանի որ Ընթացակարգի հրավերի թիվ 1-ին չափաբաժնի մասով գնման առարկա է հանդիսանում Պրոյեկտոր 3-ը, որի համար Ա/Ձ Արտյոմ Սահակյանը հայտի թիվ 3.1 հավելվածով սահմանված ձևով ներկայացրել է առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը և ծագման երկիրը:

Միաժամանակ ինչ վերաբերվում է «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից բողոքով ներկայացված այն դիտարկմանը, որ Պատվիրատուն համաձայն՝ Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ կետի խմբավորել է 1-ին չափաբաժնում 3 հատ առանձին բնութագրեր ունեցող լիովին տարբեր սարքավորումներ, ապա սույն մասով արձանագրում եմ, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ըստ էության վիճարկվում են հրավերի տեխնիկական բնութագրի պահանջները և այս տեսանկյունից անհրաժեշտ եմ գտնում նշել, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը սահմանում է, որ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը: Մինչդեռ «ԳՀԱՊՁԲ-2019/12-2-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման նիստն արդեն իսկ տեղի է ունեցել, ուստի Ընկերության կողմից այլևս չեն կարող վիճարկվել Ընթացակարգի հրավերի պահանջները:

Ինչ վերաբերվում է բողոքաբերի այն դիտարկմանը, որ Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով պրոյեկցիոն էկրանի ճիշտ անվանումը LUMA 2-ն է, այլ ոչ թե՝ LUMA 02-ը, իսկ ընկերության անվանումը Draper, Inc. է այլ, ոչ թե՝ Draper, ինչպես ներկայացված է Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած

«Էլեկտրոգրուպ» ՍՊԸ-ի կողմից հաստատված Հրավերի N 3.1 հավելվածում, ապա սույն մասով արձանագրում եմ, որ թեև «Էլեկտրոգրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում տվյալ գնման առարկայի Draper, Inc.-ի փոխարեն նշել է միայն Draper, իսկ LUMA 2-ի փոխարեն LUMA 02, այնուամենայնիվ առաջարկված ապրանքի մյուս պարամետրերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգել, որ խոսքը գնում է Draper, Inc. Ընկերության LUMA 2 պրոյեկցիոն էկրանի մասին:

Միաժամանակ ինչ վերաբերվում է բողոքաբերի այն դիտարկմանը, որ «Էլեկտրոգրուպ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված ապրանքը իրենից ներկայացնում է պատին ամրացվող գլանակային, այլ ոչ թե՝ համալսարանին իրականում անհրաժեշտ շրջանակային պրոյեկցիոն էկրան, այն էլ ոչ թե էլեկտրական, այլ ձեռքով կառավարվող, ապա սույն մասով արձանագրում եմ, որ «ԳՀԱՊՁԲ-2019/12-2-ԵՊԲՀ» ծածկագրով Ընթացակարգի հրավերի 2-րդ չափաբաժնով սահմանված չէ պրոյեկցիոն էկրանի շրջանակային և էլեկտրական կառավարվող լինելը, ուստի գտնում եմ, որ բողոքաբերի դիտարկումներն սույն մասով անհիմն են և չեն բխում հրավերի պահանջներից:

Ինչ վերաբերվում է բողոքաբերի այն դիտարկմանը, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն դեռևս 2015թ. նույնանման առիթով «ԵՊԲՀ» հիմնադրամին է ներկայացրել Panasonic ընկերության պաշտոնական գրությունն, որտեղ սևով սպիտակի վրա գրված է, որ «U» վերջածանցի առկայությամբ Panasonic պրոյեկտորներն նախատեսված են բացարձակապես ԱՄՆ-ում վաճառելու համար, «U» վերջածանցով Panasonic պրոյեկտորների ներմուծումը այլ երկրներ անթույլատրելի է և նման դեպքում Արտադրողի կողմից տրվող երաշխիքն այդ պրոյեկտորների վրա ընդհանրապես չի տարածվում, ապա սույն մասով հայտնում եմ, որ Ընթացակարգի շրջանակում տվյալ գնման առարկայի համար երաշխիքային սպասարկում տրվել է ոչ թե Արտադրողի այլ Մասնակցի՝ Ա/Ձ Արտյոմ Սահակյանի կողմից, ուստիև գրությամբ ներկայացվածը տվյալ դեպքին չի վերաբերվում:

Ինչ վերաբերվում է բողոքաբերի այն պնդմանը, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մասնակիցների կողմից ներկայացված տվյալների իսկության ստուգման նպատակով պետք է կիրառեր Կարգի 67-րդ կետը, ապա սույն մասով արձանագրում եմ որ Կարգի 67-րդ կետը սահմանում է, որ գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների

գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Այս տեսանկյունից անհրաժեշտ եմ գտնում նշել, որ վերը նշված կետը չի պարտավորեցնում գնահատող հանձնաժողովին պարտադիր կերպով կատարելու մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգում, այսինքն դա թողնված է գնահատող հանձնաժողովի հայեցողությանը: Հետևաբար գտնում եմ, որ նման պայմաններում գնահատող հանձնաժողովը՝ չկատարելով մասնակիցների ներկայացրած տվյալների իսկության ստուգում, այլ ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը գնահատելով միայն հրավերով սահմանված կարգով չի խախտել Կարգի 67-րդ կետով սահմանված պահանջը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 22.07.2019թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**